# ՏԵՍՈՒԹԻՒՆ

## անթառամ ծաղկի

արարչական վարդանայ եւ վարդապետի

ՏՊԵԱԼ

ռմձգ

2004

4969-ան 1466-ԱՀ

# ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ընդհանուր Տաղից

Մեծայուսցէին։

Արարեալ Մեծի Վարդանայ վարդապետի

ՏՊԵԱԼ

Ի Տպարանի Աթոռոյ

Սրբոց Յակովբեանց։

ԻՍԲ ԵՐՈՒՍԱՂԷՄ

1834 ՌՄՁԳ



Բարձրացի՛ պատուի՛ քո ինեւ.
և ցուցցի փրկութիւն իմ քեւ։

ՀՍՍՌ–Арм.ССР

# Ընթացուած ծաղկին Սարգսա-նայ վարդապետի 'ի խնդրոյ Սարգսի ։

Թագաւորեալ Քս եկեղեցի՝ ամենայն հրաման տայ ում և կամի՝ կոչելով 'ի գործ. իշխանութի տուեալ յերկինս 'ի վեր անխախտ վիճակի պետութիւն ։ և 'ի յերկրին ձոխաբան երևեալ. առ ի բրաքանչեր հողմունանն հիւսիսոյ և հարաւոյ յուզարկելով և կոչելով Սբ հայրապետին զգլխաւորան, հաւանօք նոյնպէս հրամանաւ 'ի ձայն զօրութե. մանաւանդ գլխոյն տէրունի և լրումն ամ անդամոց նորա. մեծարեն զմեզ յառաջեան որ լի է գործով. և 'ի գործս պաշտօնման. որ վերագոյն է քան զկար զօրութե իմոյ և քան զարժանն իմ ։ Բանզի բանիւ պատուել հրամայեն զմեզ բանին այս, որ բանիւ բարձեալ ունի զարարածս յոչնից գոյացուցեալ. և գերերդմանաւքն և յուզակաւոր ձառիւք բերկրանաց մեծարել զմիշտաւոյ վերաբերմամն նորա յանմիտի-

 խո

խաւլանն բարիս · այն որ եւրոպի մայրութե
և միջնորդութե փոխեաց զազգս մարդ-
կան յանմահութե կենաց ։

Այլ թէպէտ և մեք մեղօք տկար, և մտօք
խաւարչուտ գոլով, և բանիւ փցուն և
անհամարձակ · սակայն ՚ի զօրութիւն աղ-
դիծանական հրամանին վստահացեալք · որ
անբանից բան շնորհէ, և համրոց խօսս,
և պարզէ զլեզուս ծանրաշարժս, եկես-
ցուք ՚ի հանդէս ՚ի ձեռն օգնոյդ ձեր յաղ-
թահարել, և յաղօթիցդ օժանդակել,
դուզնաքեայ պարգեւօք պատուեսցուք զե-
րեւս խորհրդական աւուրս նշման մեր տն
մերոյ և ած, որ ոչ նոյնէ պահելով զնորա
իւրն աննիրհելի ակամբ ՚ի տուէ և ՚ի գի-
շերի ։ Ո՛վ ի թէ մեծն Եղիաս շարժմամբ
վերացաւ յերկինս, զկարգ պայծառ և պատ-
շաճ էր յայնմ աւուր և յայսմ աւուր
վերանալոյ մերն լուսոյ Ս. Ծածնին յերկ-
րէ յերկինս՝ անշարժ մնալ տարածոցս ։
Այլ ճշմարտապէս շարժեցաւ և շարժի եր-
կիր ՚ի բաց սակ զհողեղէն պտուղն իւր,
զայնպիսի՝ որ ոչ միայն արժանի է խնա-
նալ

նալեաց Ձեզ, այլ և սոսկալի և հիացման
արժանաւոր լուսեղինաց դասուց. վասն որոյ
շարժեցան և շարժին նոքա ի յուղնելն
զնաշխարհիկն ծնունդ Ձեր և զծնօղն
աշխարհագործ արարչին. շարժեսցուք և
մեք ի բազում երասախս զմիտս և զխոր-
հուրդս. զխօսս և զխոստովանութիւնս յերգս
օրհնութեան և ի ձայն սաղմոսաց, կցորդելով
և մատանց արարածոց. ի ցնծութի և յու-
րախութիւն օգտաւորաց մտին, և ի մաքրութի
անարատութեան մերոյ. Բայց քանզի օրէն է
արհեստի նուիթս խնդրել ի պէտս. և
ամ դպիր աշակերտեալ արարչութեան, հա-
նէ ի գանձէ իւրմէ զնոր և զհին զիրս.
և ի նոցանէ բացախայլէ զծնունդս բա-
րեստհմիկս ի զարդ աւուրն խորհրդոյս.
Նոյն յարմար Ձեզ տօնիս բնաբան, որ
բաւնայ զխորհուրդս, չէ եղեալ յա-
ռաջելոց և յաւետարանչաց. Թէպէտ և
ամենայն մատեանք հին և նոր վասն անճառ-
անձանձնելութե հանդիսացուցեալ Թերևս
նախախնամութե հաղագս Ձորին որ, զի



զկա

ընկատարութիւն սրբուհւոյ Յովհաննիսի, և ըզ
վախճան կենցաղոյս անցաւորի, մեք՝ որ
'ի կատարման ժամուս և մօտ 'ի վախճան ե-
կելքս, հոգասցուք 'ի մենջ, և մեր առա-
ջին հարց զբանսն և զերգսն յիշեսցուք
'ի մեծապատիւ չքնաղ տօնիս, և ցուցցուք
զնոցա հոգեբընկալս և խորախորհուրդս 'ի-
բանս իւրեանց. հաւատով տն որ ասաց,
ընդ ձեզ բնակեցայ և ընդ ձեզ եղեցի յա-
ւիտեան, զոր առաքեցից ձեզ 'ի Հօրէ
իմմէ. յորս համարձակեալ եդաք զնծա-
մերձ ծերութեան մեր զբանսն զոր երգեն
յայսմ աւուր մանկունք եկեղեցւոյ սաէ-
րով իւրեանց հոգեխառն և ածամուխ
բանիւն մեծացուսցէին: Անթառամ ծաղիկ
Ոչ ի թէ մեր Թարգմանիչն և հոգեշարժ
վարդապետն Մովսէս խորենացին ասացեալ է
զծննդեան և զյարութե երգս շարականաց.
և թէ մեծն և հանդիսաւոր ճգնաւորն
Բարսեղ, մակ անուամբ ճոնն կոչեցեալ.
որ և ստուգեն թէ եօթն անգամ ետես
զՔս, և խօսեցաւ իբր թէ ը բան բա-


րն

ընկալելի . ապա չէ՛ պարտ պակաս համերել ՚ի խորհրդաւոր բանիքս յայս՝ քան յառաքելական աւանդութիս . քանզի ՚ի նոցանէ և ՚ի նոյն հոգւոյ խօսեցեալ եղև հաւասարապէս որ ասէ .

Անթառամ ծաղիկ .

Գիտելի պարտ է թէ ՚ի գրոց առեալ է զծաղիկ յեսայեայ , որ ասէ ՚ի նոյն խորհուրդ որպէս ՚ի դիմաց կուսին ասացեալ . ես ծաղիկ դաշտաց և շուշան հովտաց . Իսկ զանթառամ ասելն ՚ի բանիցն զօրութենէ . զի ծաղիկ ասաց ելանէ . զի ծաղիկ եմ ասէ և յայլ ինչ փոխիլ չասաց . այլ որպէս թէ միշտ ծաղիկն գոլ անթառամ լինի և անխափանաբար յար .

Ծաղիկ գեղեցիկ գունոյ է անուն . որպէս թէ ծաղկողք երեւմամբ այտից երեսաց՛ն . որպէս և զնմանէ իսկ ասի ըստ մարմնոյ խառնեալ գունով կարմիր և ըսպիտակ , իբրև զմարգս համասպռամ ծաղկօք լի . մի՛ ծաղկին և լայն երեսօք . որ է պատկեր իմանալի հոգւոյն գեղեցկութե .

որ և զերկնաւոր ցօղն առնել ըստ Դաւթայ
եբեր զխնծորն քաղցր և գեղեցիկ 'ի մէջ
փայտից անտառաց ըստ երգոյն . քանզի
ծաղիկ պտղոյն դուշակ՝ որ կախեցաւ ըզ
փայտէ խաչին , և եղև կերակուր կենաց .
այլ ծաղիկ նմայ անթառամելի որպէս 'ի
դէմս երեսացն , և շուշան շնորհացն նոյ
յոգւոյն . առաքինի որպէս կուսութիւնն
անխախտ յետ ծննդեանն որդւոյն . ո՛չ որ-
պէս որք ըստ տուտուսս ծաղկին և չոր-
մանք մեղացն հողմով թառամին չորանան
և անկանին Է երեկոյս , այլ ըստ արդար
գոլոյն երբեք զարմանալիս ծաղկել 'ի հա
անուշաբուրիչ և 'ի հանճարս աչաց հայե-
լոյ , և 'ի զուարթութիւն սրտից մերոց ,
միշտ կայ և մնայ յաւիտեան :

Իսկ Անդաստաղաւոր շուշանիդ ասեալն , ոչ որպէս
և այլ շուշանիդ յորթոյ և մեղաց պտուղ
ցուցեալ դատապարտեցաւ 'ի մահ և մայր
եղև մահկանացուաց , այլ անպարան խո-
կոհի յամուլ ծնողաց արդարոց շուշա-
նիդ շնորհաց ընձիւղել , կենաց և փրր-


կու

կութեան ծուցեալ պտուղ, արտաքոյ
եղև եւայի պարտուցն. պատճառ և մայր
կենաց եղև և տասցաւ, ծնանելով զայն
որ ասաց, ես եմ ճանապարհ և դուռն
ճշմարտութի և կեանք, և 'ի ձեռն նմա-
նութիւն հրաւիրելով բազում որդիս
և դասս կուսանաց, եած 'ի փառս որդ-
ւոյն իւրոյ պտղոյն կուսութե.

Վերաբերութեան յարմարոյն յեսսեայ.

Յայս եղև թէ հգաւազանին բղխումն
էառ զմարգարէին Եսայեայ, որ 'ի դա-
ւիթ ունի զակնարկումն. առաջին առել
գաւազան թագաւորութեն որդի յեսսեայ
և ծաղիկ ելեալ 'ի նորին արմատոյ անբիծ-
կայն Մարիամ որ էր դուստր յովակիմայ
որդւոյ բարայ, որ կոչի Պանթեա. որոյ
եղբայրն մելքի 'ի նաթանայ որդւոյ դաւ-
թի, էառ զաւէայ զմայրն Յակոբայ և
ծնաւ զհեղի. զորոյ զկինն էառ եղբայր
իւր յակոբ և ծնաւ յովսեփ. որում
խօսեցել եղև մայր տն. երկու եղբօր
թոռունք գոլով Մարիամ և Յովսեփ

՚Ի հարց․ իսկ ՚ի մօր կողմանէ ՚ի քահա-
նայական ցեղէ դուստր մօրն Աննայի դը-
տեր Մատթան քահանայի․ զի իցէ ինքն
մայր թագաւորին դարձելոյ ՚ի մանկութեն
յազգէ յուդայ, և քահանայի մեծի ըստ
կարգին Մելքիսեդեկի ՚ի ցեղէն ղևեայ․
և այս է ասելն վերաբերութեալ յարմարոյն․
կամ այլք ասեն գաւազան բղխեալ ծ͞րն
առանց սերման յանշաղախ կուսէն․ որ և
նա արմատ է յեսսեայ ՚ի հօրէ կողմանէ․
որպէս ասացաւ․ ծաղիկ նախկի երևեալ
՚ի գոյութիւն պտղոյն քաղցենւոյ, և
գաւազանին ծաղկելոյ նորին իսրայէլի, որ
ծաղկեցաւ իսրայէլի ազին և լցան տիե-
զերք պտղով նր․ որով ծիծաղին և ցըն-
ծան արդարք և ընուն շրթունք ճշմար-
տից ըստ առակացն բանի․ Քանզի ասեն
անմարթ է մարդոյ ՚ի ծնողաց ծնեալ ՚ի
հօրէ և ՚ի մօրէ բղխումն կոչել, բայց եթէ
ա͞ծն է վայելչական պատճառին բնաւից․

Զքեզ եսայիաս կանխաւ վերագոչեաց եօթնարփեան
շնորհաց ընդունարան գոլ․

Նոյնպէս միջամտեալ և խորհրդածեալ է
անօրէնութեան խորհրդոյ քան զամ մար-
գարէսն. վոյ առաքել և աւետարանիչ
կոչի. ըստ այնմ աւասիկ եմ առաքեմ զիս
և ել ՚ի վերայ լերինդ բարձու աւետա-
րանիչդ սիոնի. այլ և ծածկաբան յորջոր-
ջի և մարգարէ իսկ է. և զէմմանուէլն
մայրն ետես, և խորհրդոյն հաղորդ եւ յաւ
սրովբէին. ըստ որում և զայս վերագո-
չեաց վերագոյն և կանխաւ ժամանակօք.
ո՛չ ասաց մեղմագոյնս բարբառեալ. այլ
գոչեաց ձայնիւ մեծաւ՝ յորժ հեռի կա-
ցելոցն. քանզի ո՛չ խօսէր ընդ մերձակայս.
և զի՞նչ գոչեաց եթէ մայրն էմմանուէլն
եօթնարփեան շնորհաց հոգւոյն ընդու-
նարան գոյ. Սորին երկինք կոչի, որպէս
թէ ասիցէ եօթն զօրութի ամենասուրբ
հոգւոյն, որ եօթն երկինք յօրինեալ.
որք ոչ են հերիք տանել զշնորհս նորա.
կամօք խոնարհի առ կոյսն չքնաղ, և
տարեալ լինի ՚ի նմանէ. Իսկ եթէ ո՞րք են
եօթն երկինք. զի գիրք երկու ասեն.



ոմանք

ոմանք ընթացս եօթն աստեղաց՝ որք մոլորականք ասեն․ զոր գտանէք կոչեն և խորանք անուանեն և տունք յաւիտենից․ ո՛չ զի ՚ի միւս երգսն ասէ թէ հրամայէն եմուտ յեօթնաստեղեան խորանսն , ուր զանազան աթոռս կային կազմեալք․ և եթէ են այլ եօթն երկինք վերագոյն եօթն աստեղացն , և այն ևս չէ անհաւատալի , թէպէտ և այժմ մեզ անգիտելի․ զի երկինք երկնից ասի , ուր ած հանգչի․ և պօղոս զինքն յերրորդ երկինս ասէ առեալ․ և յաղագս քսի ասէ թէ ել ՚ի վերոյ քան զամենայն երկինս , զի լցցէ զամ․

Իսկ թէ յորում տեղւոջ ասաց եսայի եօթնարփի շնորհաց ընդունարան գոլ , ՚ի նմին տեղւոջ․ ուր ասաց բղխեսցէ գաւազան յարմատոյն Յեսսեայ , և ելցէ ծաղիկ յարմատոյ անտի․ յաւել և ասաց հանգիցէ ՚ի վր նորա հոգի ած , իմաստութե , գիտութե , հանճարոյ․ խորհրդոյ․ զօրութե , երկիւղի , ածպաշտութե․ որ և



հանգեաւ

հանդերձ խնկ նախ ՚ի ծաղկին Մարիամ
ըստ գաբրիելի որ ասաց՝ Հոգին սուրբ
եկեսցէ, և ապա ՚ի գաւազանն՝ յոր ե-
լեալ կանգնեցաք, անկեալ և գլորեալ
որդիքս ադամայ ՚ի ձայնէն հօր ուսեալք
ընդ որոտմամբն յաւուր մկրտութեան ՚ի յոր-
դանան, եթէ դա է իմ որդի, զոր հո-
գին սուրբ հաստատեաց իջանելով իբրև
զաղաւնի և հանգչելովն, զոր աւետեալ մեր
իբրև զհամանման և զուգապատիւ սա-
նելով զէակցութիւն նորա. զի նա է բաւա-
կան նմա, որպէս և Հօր և Հայր Որդւոյ
և Հոգւոյ. և Հոգին Հօր և Որդւոյ. և
զշնորհս մանկանց պարգևականին տայ եկե-
ղեցւոյ իւրում սրբոյ. որով իմաստնացեալ
գիտասցէ զՔս և զաշակերտս՝ հանճա-
րով խորհրդական գրոց, և զօրացեալ ՚ի
տկարութե երկիւղին մեր մնասցէ յանձնապա-
տուէ ընդդէմ զանազան փորձանաց կացել
մարտիրոսական հանդիսիւք. և ծանուցա-
նելով զմայրն Էմմանուէլի, Աստուածածին և
կոյս խոստովանելով, քանզի ճշմարտա-


պէս

պէս փայլելէր կոյս գոլ մօր այ • որ ի
հօրէ բան և որդի ծնեալ կուսութեամբ
անմայր • զօ. րոյ զշնորհք պատուոյն հրեշտա-
կաց շնորհեաց կուսութե • որք յանբաւ
բիւրս անձեցեալ, կան մեռան ՚ի նոյնութե
արդ անուան և անթերի • Իսկ թէ զիարդ
մեծարեմք զա՛ծածին զանասելի և զան-
պատմելի զմեծն և զանկարօտն, որո՛ք լինքն
զա՛ծ ասէ մեծացուցանել • այսինքն՝ վկա-
յել այ մեծութեանն և ոչ յաւելուլ
՚ի նա • այլ խոստովանել • նմանապէս և
մեք մեծութե նորա տամք վկայութի և
խոստովանութի • զի յորժամ ասէ մովսէս
զօրացուսցին ամ հրեշտակք զա՛ծ՝ ոչ կա-
րեմք ասել ՚ի տկարութե զօրացուցանել •
այլ տալ նմա խոստովանութի, եթէ տէր
հզօր է զօրութ՛բ, տէր հզօր ՚ի պատերազմի •
զօր և յահագին գիշերին ՚ի կալն ամն յա-
ղօթս • հրեշտակք իջեալ ասի յերկնից
զօրացուցանել զնա • Իսկ արժանապէս
երգով խուրական մեծացուցանել աստ-
ուածն • կամ ամ մարգարէից և առա-

փքելոցն երդուանցեալ մնայութին ՚ի մէջ քո .
և ոչ հեթանոսականն ատասպելեօք ինչ .

Համեղաճաշակ պտղոյն բանաւոր բարուածոց .

Բարուդք նախ ծաղկին ասաց , որ զաւետիս
տանի զպտղոյն և դժուշակման . և ապա
զպտուղն՝ որ արդիւնք է ծաղկին . որ,
ոչ միայն հոտով զունդունան . և գունով
զաչս առնէ ուրախ . այլ և շօշափելեաց
զգայլի , և ճաշակելեաց քաղցրացուցիչ .
որոց մնայեն վայելուչն . ձեռք մեր շօշա
փեցին զբանն կենաց . և պտուղ նորա
քաղցր է ՚ի կոկորդի իմում :

Պտուղ յորմէ ճաշակեցին նախաստեղծքն
՚ի կեանս և յանմահութե յանմեղութեան
իւրեանց . և յանցաւոր գտեալ զրկեցին
զանձինս ՚ի կենաց , և հեռացեալ ՚ի
պտղոյն՝ հրաժարեցան ՚ի մահ . զոր և
դարձեալ խոստացաւ գթութեամբ Տէր
բարի՝ տալ ՚ի ժամու զպտուղն , յորժամ
ուռուցեալ լինին օրինացն Ջերով՝ որդիք
նոցա . վասն որոյ և առաջորդօք մարդա
րէիցն զտոտասարձակացեալ և բարեբեր բա

րունական Տ. Ծածնաւ որ տուեալ ընդու-
թեամբ ըստ սաստկելոյն յերեսացն հօր ·
զինչեն գտաւ պտուղ ՚ի քեզ · վայ և ա-
ձէ հաւանդաձաշակ · այսինքն հում շատ և
զանազան և անույշ , բայց ոչ ամենեցուն ,
այլ ճաշակողացն միայն · ըստ այնմ ճաշա-
կեցէք և տեսէք զի քաղցր է տէր · որում
և յերգսն ՚ի խնկենեաց սստոմն տեսա-
նեն պէսպէս պտուղս համով և հոտով
երևեալ նարդոսիւ և քրքմով խնծոր
և նարգէս , նռունս կինամոմս ելեալ ·
ոչ յանտեան բուրումնովք , այլ ՚ի բանա-
ւորէ · որ ազատ կամօք և անձնիշխան
յօժարութբ և արուեստաւոր և խմա-
տուն համաձայնով յօրինէ չքնաղս ող-
կուզեյն · ՚ի վր մրգաբեր տնկոց · քանզի
բարունակ սեռն զայն որ բառնայ յինք-
եան բազմաշառաւիղ ուրթս , եթէ յար-
մատացեալ ծառս , եթէ ՚ի հաստել բա-
զուկս փայտից` յօրինեալս ՚ի ձե տախտից
անջրպետելս միջոցօք , զի զուռն և զտե-
րևսն ՚ի վեր ունիցի · և զողկոյզն գեղե-


ցիկ

ցեկ բազմոգոր ցուցանէ 'ի վայր 'ի ներ-
քուստ, ամենայն հանձոյ աչաց հայելեաց
և առ ձեռն ցանկացողաց:

Այս արդ՝ զի բանաւոր է բարոյականն.
բանաւոր է և բազմեալ ողկոյզն 'ի նմա.
որ բանիւ կազմեաց ինքն բարոյականին
զինքն երկնաբերձ տունկ՝ տապալեալ յա-
տով. հաստատով և սիրով՝ այլ և դա-
հոյս և բարեմոյս և կատարոյս ողկուզին.
Զառաքինուն բազուկն լայնատարած յա-
րինեալ. որովք երևեցան գնտակք շը-
նորհացն ողկուզին բարձրահայեաց բա-
նականաց. որ և ընկեալ զմիս բարու-
նակել խաչին և կթեալ ողկուզին, և
ճմլեալ բևեռացն մանգաղաւ կուսածա-
զին և ածանոյց բազկացն տարածմամբ
յաղօթս, բաշխէ ըմպելիս յուրախութե-
հաւատացելոց, հալածեցին զարդն հին
և զտրտմութին առաջին, յաղագս զկման-
դրախտատունկ խաղողին. և առաւել
կենդանութեան պտղոյն. որպէս և ասէ եր-
գոյս բանն. եթէ:

բա

400 10-67
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ - Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
67

Բանաւոր բուրաստանն յորմէ կթեցաւ մեզ ողկոյզն ան֊
ապատ յուրախութիւն տրտմեցելոց 'ի ճաշակմանէ
ծառոյն գիտուն։

Քանզի եհան արձակեաց ասէ՝ զնախա֊
ծնողսն մեր 'ի դրախտէն փափկութեան.
և հրամայեաց քերովբէիցն և բոցեղէն սրոյ
շուրջանակա՝ պահել զճանապարհ կենաց
փայտին. զի մի՛ դուցէ ձգեսցէ զձեռն
ադամ և ուտիցէ 'ի պտղոյ նորա ևայլն.
և կեցցէ յաւիտեան, այլ նիւթն հողոյ
վճռեալ մահու երթիցէ 'ի հող. զայս մեծ
և զահագին և զկակծելի տուգանս, և
զանփոխադրելի ածավճիռ հրամանս. և
զանլուծելի վարկս փոխեաց, ոչ այլ ոք
այլ յեղելոցս, քանզի ո՛չ կարէին զա֊
սաց և եղեն շրջել. այլ նորին ինքն ա֊
բարչական գութն. և անդունդք սիրոյն.
որ եկն գոյիւ չափ առ բարեբեր բարու֊
նակ սրբուհի կուսն, և բուսաւ 'ի նմանէ
մատաղ և փոքրիկ որթ. և սա աճեալն
տեր եղական մարմնով. և եղև պտուղ
քնքնին. և ասաց նոյն վճռատուն առաջին

 վե

վեցհազարամեայ քաղցելոցս և ծարաւե-
լոցս, թէ զիս Լուէք կերէք և արբէք.
և զպտուխտենից մահն ոչ տեսանէք. և
պտուղն հաց է յերկնից իջեալ. որ ու-
նի գինի նոր ոյ մշակեալ՝ որ բաւանայ
զամենայն արտասուս յամենայն երեսաց. որ
վ̃ս մահու և մեղացն երկիւղի, որով վտա-
րանդեալ կէին ՚ի ծառայութե̃ որդիք ա-
դամայ. որոց միջնորդ և այժմ բարեխօս՝
սրբուհին է անարատ. որում երգեմք. եթէ
Սրբուհի անարատ ամենեքեան զքեզ մեծացուցանեմք.
Սրբուհի Տիրուհի ասի. քանզի կցորդ
և հաղորդ և մասնակից է սրբութեան
և տէրութեան և ա̃ծութեան որդւոյն.
որպէս թագուհի թագաւորութե̃ և իշխա-
նուհի իշխանութե̃, որում ոչ գոյ ինչ
համեմատ. որպէս Նուայ տաճարն կայ
գոլով՝ արատաւորեցաւ յայլ մեղս. իբր
ու հեթանոսս յոլովք լինէին պիղծ և
արատաւոր կռուանք քրմուհիք և մոլէք.
Իսկ մերս գոլեալ և մեծարեալ Ա̃յս ա-
նարատութեամբ փառաւորեալ. ըստ ա-

 սե

մերոյն. եթէ բոլորովիմբ գեղեցիկ ես.
եւ արատ ինչ ոչ գոյ 'ի քեզ:

Քաղաքավարեալ 'ի մարմնի անմարմին վարուք.

Բարձրագոյն եւ ամենայն բարեաց վկայեաց Տիրամօրն. զի մի թուեսցի օտար գոլ 'ի բնութենէս եւ յաշխարհականացս. նոյն ինչ ստացեալ բնութիւն եւ միաձնակա- յաւէտ եւ տաց քաղաքավարեալ 'ի մարմնի. ցուցանելով թէ աշխարհի քաղաքացի եւ զաւակ 'ի սմին ադամեայ մնացաւորի. այն որ շնորհօք բանին բարձրելոյ եւ իւր ազատարարոյ առաքինութե վերագոյն գտաւ երկնից յանձնաւլայելոցն հաեալ պատուի. վասն որոյ եւ աստ քաղաքավարեալ 'ի մարմնի.

Քաղաքավար եւ աշխարհավար այն է, որ յինքեանն 'ի բաց վարէ զփափկութիւն քաղաքի, եւ զցանկութիւն աշխարհի: որպէս տէրն առաքելոցն վկայեաց թէ դուք չէք յաշխարհէ. որոց աստուածածինն Ածն Մարիամ պարծանք եւ պաշտելի դասուց Առաքելոց եւ կաթուղիկէ Եկեղեցւոյ.



որ

որ քաղաքավարեցաւ 'ի մարմնի անարատ վարուք, այսինքն գնացիւք. վարեաց և ոչ թէ վայելեաց. քանզի տն մերոյ և այ գալստեամբն, անցաւ վայելչութիւն աշխարհի, ըստ առաքելոյ վկայութեանն, թէ անցեալ է վայելչուի աշխարհիս այսորիկ. զի զայս վարեսցուք, և որ գալոցն է աշխարհ՝ զայն վայելեսցուք. յորդորեաց Պօղոս օրինակ առեալ զամենամեծն Մարիամ, որ քաղաքավարեաց 'ի մարմնի անարատ վարուք. 'ի մարմնի համարեալ զանձն, որպէս բնակիչ 'ի տան. որում գանձ յաման խեցեղէն. որ և առաքինոց ևս գիտնոց յայտնի է որպէս Պղատոնի որ ասէ. որում յումեմն պահարանի եմք, մինչ որ եդիրն հանէ աստի. զի այլ է ասէ հոգիս, և այլ է մեր մարմինս, և այլ է մերոյքն ստեղծուածք զոր կարծ և համարեալ ասէ. Ես, և իմն և իմոյքն. զոր և'ս գերագոյնս գիտէր կոյսն 'ի մարմնի գոլ. որ է ընդարմն, թմուր, խուլ. զի ընդարմացեալ է հոգի 'ի նմա

 և

և ինքն Ճարմանայ 'ի գերեզմանի · Թէ_
պէտ Սրբուհւոյն սակաւ ինչ զերիս ա_
ւուրս , ըստ իւրածին ոգւոյն միածնի·
որպէս և ասէ՝
Այսօր յառաջելոյն ամփոփեալ վերին ակնարկութեան·
Քանզի դասք առաքելոցն՝ որք էին ցրուեալք ընդ աշխարհս՝ ակնարկելով 'ի բարձանց այ , յական քթթել հաւաքե_ ցան 'ի վիճակաց իւրեանց 'ի մէջ Եմ 'ի ժամ հրաժարման Տիրուհւոյն · զի ամ_ փոփելն հաւաքել և ժողովել ասէ 'ի ցրմանէն· քանզի այսպէս հաճոյ է միտքն , քան եղեալ և յառաքելոյն ասել ամ_ փոփեալ · որպէս թէ զկոյսն դիտապատեալ զի միայն Յոհան ասէ պատմութիւն պատ_ կառուտին պատեալ , զի 'ի տնէ նմա է տուեալ մայրն իւր և ոչ ամենեցուն · Իսկ թէ 'ի վր թաղմանն առնուն զամ_ փոփելն՝ չէ՛ անդէպ· զի ծածկեալ բազ կայքն իւրեանց եդին 'ի գերեզմանի ամ_ փոփեալ առաքեալքն · վասն որոյ ասէ
Ամփոփեալ վերին ակնարկութեամբ · Զոր

 յա

յառաքելոց առնու զքն Դիոնէսիոս ՚ի
Թղթին առ Տիտոս ։

Վերափոխեցար յարքայութիւն որդւոյ քո և այ մերոյ· Նախ փոխեցաւ Թագուհին հոգւով մայրն Թագաւորին ՚ի Թագաւորութիւն որդւոյն իւրոյ և այ մերոյ· և մարմինն լուսանշոյլ և ածամուխ ՚ի գերեզման եդեալ ՚ի գեթսեմանի ջահիւք և լապտերօք ՚ի ձորն Ջահից կոչեցելոյ· և սիւն լուսոյ և շող երկնային վայլս իջեալ ՚ի բարձանց ակն յայտնի տեսողաց մինչև յերիս աւուրս խառնեալ ընդ լուսոյն լուսեղինացն զօրաց յերգս հոգևորս գովէին գգուէին մեծարէին օրհնէին մեծացուցանէին անճառելի ձայնիւ զմարմին տիրակիր ածածնին, ածասնոյց, ածահամբոյր, ածաշօշափ, ածամուխ, և գերաշխարհիկ· և յերրորդումն աւուր յարուցեալ ընդ միածնի որդւոյն իւրոյ՝ երկնառաք լուսով, և դասուք հրեշտակաց վերանայ յարքայութիւն որդւոյ իւրոյ· զանմահականն առեալ Թագաւորութիւն անսպառ

պաշտօնէին , անցեալ ընդ զգալի եւ ընդ
իմանալեաց աշխարհ ։ յամենայն հասեալ
խորանն , ի որն սրբոց կոչեցեալ , ի ներ_
քին կողմն վարագուրին յանհասական
զհուռս , եւ յանզուգական պատուին ։
Բարեխօս խոստովանողաց զնա Ա՟ծածին , եւ
զորդի նորա Ա՟ծ ճշմարիտ , յետ ակամն խա_
կութենէ հօր եւ ամենասուրբ հոգւոյն ․
մի աստուածութիւն եւ զօրութիւն եւ ա_
րարչութիւն ․ յերիս անձինս զուգակից
եւ համագոյակից ․ մի գթութիւն եւ ողոր_
մութիւն եւ անպատմելի քաղցրութի_
ւն իւրական սրբոցս , եւ մանաւանդ
առ իւր խոստովանողս եւ երկրպագուս ,
բարեխօսութեամբ ամենասրբուհւոյ Ա՟ծա_
ծնին ․ որոյ այսօր փոխումն եւ յիշատակ
փոխմանն ․ անանջատ եւ աննկուելի եւ ան_
փոխադրելի ի մեզ , զանբովանդակելի
զշնորհն առեալ յաստուածոյ մեծական
պատիւն ․ զի որ համբարձաւ ա՟ծ յան_
դիման աշակերտացն եւ ընդ մեզ է սատ_
զապէս ․ որպէս եւ ասաց ընդ ձեզ եմ


զա

զամենայն աւուրս անձկալութեամբս ։ զի
մտանել կարասցուք ։

Ողորմեա և մայրն խոր վերացեալ և
փոխեալ յերկինս ընդ մեզ է 'ի մինե առ
եալ պարգևօքն ․ վասն որոյ անուամբ և
ներգործութեամբ ամենայն ուրեք է ․
'ի խաչ և յեկեղեցիս և 'ի կենդանատուրս
խուր, 'ի հոգիս և 'ի սիրտ և 'ի շրթունս
հաւատացելոց և խոստովանողաց զնա ։
Ա՛յ Տարածիւն, ընդ ծով և ընդ ցամաք գո
լով և գործելով զգործ Քոյ, 'ի շնորհս
նշանաց և արուեստից զօրանալով յամե
նայն ախտս ։ 'ի պէսպէս ցաւս և 'ի հի
ւանդութիւնս հոգւոց և մարմնոց , կե
նօք և յետ մահու ․ զի թէ չէր պարգևս
ոչ յամենայն ամի շրջագայութեան զնոյն
որ փոխման ածելով տօնէաք ցնծութբ
և ուրախութեամբ և հսկողութեամբ և
երգօք հոգևորօք ․ ոչ յայնմ աւուր գայ
տուաքելոցն որբոց հաւաքեալ հանդերձ
հրեշտակօք, հաւատացէք թէ ընդ մեզ լինին
յուղարկաւորք վերափոխման ածածնին ։


քան

Քանզի միշտ ուղարկեմք բարեխօս առ-
ած, անմեկնելի ՚ի մէնջ. խնամելով ըզ
մեզ Ա՟ծային գթութեամբ. և բերե-
լով առ մեզ զառատ պարգևացն ա՟յ
զքաղցրութիւն. զքաւութիւն և զթո-
ղութիւն մեղաց, և զորդեգրութեան
պատիւ՝ հօրն երկնաւորի. և զեղբայրա-
կցութի՟ն որդւոյն իւրոյ միածնի. և զտա-
ճարակրութիւն Հոգւոյն ս՟բյ, որով ա-
ղաղակեմք Աբբայ Հայր. և լինիմք ժա-
ռանգ ա՟յ և ժառանգակից Ք՟ի. մխի-
թարեալք մխիթարիչ Հոգւովն սրբով.
՚ի հոգւոց և ՚ի տրտմութեանց՝ որ վասն
երկիւղի մահուան, և ահագին ճանա-
պարհին որ յետ մահու. քանզի քաղցրա-
ցոյց տ՟րն մեր զդառնութիւն մահու կա-
մաւորաբար ճաշակելով զնա՝ իբր զդեղնի
ուրախութ՟ե. և զմայրն իւր ո՛չ խնայեաց
՚ի նմանէ, այլ արար զնա մահակից իւր
և դերեզմանակից և յարութեան կցորդ.
և զի դժուարինն դիւրին եղև, և ճա-
նապարհն հարթեցաւ, յօժարութեամբ

 դնա

գնացին ամենայն առաքեալքն և ծառայեալք
կարօտին .

Ա՜յ մեք զ՛ երկիցուք ՚ի մահուանէ և յերկար ուղեգնացութենէն , հայելով ՚ի Տէրն և ՚ի մայրն իւր և յամենայն սրբսն . Բայց միայն ՚ի մեղաց երկնչիցուք որքան աստէն եմք յաշխարհի . զի մահ մեղաւո_րին չար է . և ընդէ՞ր բնաւ երկնչիմ ես . զի անօրէնութիւնք գնացից իմոց շուրջ
եղեն զինև .

Ատեացուք զաշխարհ իբրև զմայրն լու_սոյ , և մի՛ վայելեսցուք խառն անկողնօք և պղծութեամբ , հեշտութեամբ և ար_բեցութեամբ . նենգաւոր խորհրդովք և արատաւոր բանիւ . ծուլութեամբ և ա_գահութեամբ . և այլովք հոգեկան և մարմնական մեղօք , այլ ուղղափառ հա_ւատով և բարի գործովք . և անխար_դախ սրտիւք առ Ա͞ծ և առ մարդիկ . գնասցուք ՚ի մեր անմոլար ուղեգնացութ ՚ի հանգիստն մեր , բարեխօս ունելով զօրհ_նեալն ՚ի կանայս զամենասուրբ Աստուածածինն .

զի տացէ աշխարհի խաղաղութիւն · տա-
ներաց անվնասութիւն · քրիստոնէից սէր
և միաբանութիւն · եկեղեցականաց բա-
րեկարգութիւն և զգուշութիւն · աշխար-
հականաց՝ երկիւղ և լռութիւն · ան-
մեղաց պահպանութիւն և փրկութիւն ·
մեղուցելոցն դարձ և ապաշխարութիւն ·
աւագաց և մեծատանց՝ քաղցրութիւն
և խնայութիւն առ աղքատս · նեղելոց
և տնանկաց համբերութիւն և ազատու-
թիւն · գերեաց արձակումն և փրկութիւն ·
օդոց բարեխառնութիւն և շահեկանու-
թիւն · անդաստանաց և այգեաց՝ պտղա-
բերութիւն և առատութիւն · ննջեցե-
լոցն հանգիստ և պսակաւորութիւն · ե-
րախտաւորաց մերոց դարձուած և յոլո-
վապատիկ փոխարինութիւն · խնդրողաց
բանիս հանգիստ բարեաց և վարձատրու-
թիւն, աղաչանօք Ս. Ծածնին · և իւրոց
մեծարողացն և տօնողացն յամենայն ժա-
մանակս և մեզ և ձեզ լռողաց և հնազան-
դելոց ՚ի գործ բանիս՝ քաւութիւն և
Մ.

Մեղաց անյիշութիւն, զոր ինչ յանցեաք
ա՟յ ՚ի ժամանակս մեր, ՚ի միտս և ՚ի հո-
գի և ՚ի խորհուրդս, և ՚ի մարմինս, ՚ի
բանս և ՚ի գործս, ՚ի բարս և ՚ի կամս:
մաքրութիւն յստակութիւն և
անապիութ̅ն, կարող և կա-
մեցող ողորմութ̅ն ք՟ի
ա՟յ, որ է օրհնեալ
յաւիտեանս.
Ամէն:

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀԱՍՌ-Арм.ССР
МЯСНИКЯНА
ՅԱՆ

# ՏԵՍՈՒԹԻՒՆ

## անթառամ ծաղկի

արարեալ Վարդանայ մեծ վարդապետի

ՏՊԵԱՆ

1834